ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նոր Հաճն համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, 83-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատում է ավագանին, և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածով ամրագրված դրույթները, որի հիմքում ընկած է հավաստիությունը և հստակությունը:

Ստորև ներկայացվում է Նոր Հաճն համայնքի 2020 թվականի բյուջեի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը.

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Նոր Հաճն համայնքի 2020 թվականի համայնքի վարչական բյուջեի եկամուտները ծրագրով նախատեսված 334197.5 հազար դրամի, տարեկան ճշտված ծրագիրը կազմել է 355578.5 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 351828.0 հազար դրամ, արձանագրելով տարեկան ծրագրային ցուցանիշի 98.9 % կատարում:

Հաշվետու տարում հավաքագրած վարչական բյուջեի եկամուտների 103 341.4 հազար դրամը կամ 29 %-ը ապահովվել է սեփական եկամուտների հաշվին, իսկ 71 %-ը՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) հաշվին:

2020 թվականին համայնքում կապիտալ ծախսերի կատարման համար պետական բյուջեից ստացվել է կապիտալ ծախսերի սուբվենցիա 22236.8 հազար դրամ:

Գույքային հարկեր անշարժ գույքից

Գույքային հարկեր անշարժ գույքից եկամտի հաշվին համայնքի բյուջեն նախատեսված 12000,0 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 15019.2 հազար դրամ՝ կատարվելով 125.1 %-ով, որի հաշվին բյուջե է մուտքագրվել լրացուցիչ 3019.2 հազար դրամ:

Գույքահարկ համայնքի վարչական տարածքում գտնվող փոխադրամիջոցների համար եկամուտների հաշվին նախատեսված 36000,0 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 44560,5 հազար դրամ՝ կատարվելով 123.8 %-ով, որի հաշվին բյուջե է մուտքագրվել լրացուցիչ 8560.5 հազար դրամ:

Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի հաշվին համայնքի բյուջեն հաշվետու տարում նախատեսված 3050.0 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 3 431.4 հազար դրամ՝ կատարվելով 112.5 %-ով, որի հաշվին բյուջե է մուտքագրվել լրացուցիչ 381.4 հազար դրամ:

Պաշտոնական դրամաշնորհներ

Ընթացիկ տարում պաշտոնական դրամաշնորհները պլանավորված 226 757.5 հազար դրամի դիմաց հատկացվել է 248 138.5 հազար դրամ, կատարվելով 109 %-ով , որից դոտացիան 222 090.0 հազար դրամ, պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումը՝ 4 667.5 հազ. դրամ և պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ 21 728,2 հազար դրամ:

Այլ Եկամուտներ

Այլ եկամուտները պլանավորված 52 390.0 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 36 796.6 հազար դրամ, կամ կատարվել է 70 %-ով, որի մեջ ներառված են՝

Գույքի վարձակալությունից եկամուտները կազմում են 2 030.0 հազար դրամ, մուտքագրվել է 2021.4 հազար դրամ, ապահովելով նախատեսված եկամուտների 99 %-ը:

Վարչական գանձումները՝ նախատեսված 50260,0 հազար դրամ, մուտքագրվել է 34 323.6 հազ.դրամ, կատարվելով 68 %-ը, թերակատարվելով 15937.0 հազար դրամով,ինչը պայմանավորված է համավարակի տարածմամբ պայմանավորված նախադպրոցական և արտադպրոցական հաստատությունների կրթության սահմանափակումներով:

ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսագիտական դասակարգում

2020 թվականին համայնքի բյուջեի միջոցների հաշվին ծախսերի ֆինանսավորմանն է հատկացվել է 355 578.5 հազար դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 93,7 %-ի կատարում:

Հաշվետու տարում ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը հատկացվել է 329897.3 հազար դրամ, կատարվելով 92 %-ով, որը կազմում է ամբողջ ծախսերի 79 %-ը:

Ընթացիկ ծախսերից աշխատանքի վարձատրության հոդվածին է հատկացվել ընթացիկ ծախսերի 105402.7 հազ. դրամ կամ 29.6 %-ը, ծառայությունների և ապրանքների ձեռք բերմանը (Էներգետիկ ծառայություն, կոմունալ ծառայություն, կապի ծառայություն, ապահովագրական ծախսեր, պայմանագրային և մասնագիտական ծառայությունների ձեռք բերում, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում, նյութերի ձեռք բերում) հատկացվել է 50118.2 հազար դրամ կամ վարչական ծախսերի 14 %-ը, սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին է հատկացվել համայնքի վարչական բյուջեի ծախսերի 34,2 %-ը կամ 121689.0 հազար դրամ, դրամաշնորհ է հատկացվել 2 411.2 հազար դրամ՝ կազմելով վարչական ծախսերի 0.7 %-ը, նպաստներ բյուջեից՝ 12715.0 հազար դրամ կամ 3.5 %-ը, այլ ծախսերին՝ 43242.4 հազ. դրամ կամ 12 % -ը:

Հաշվետու տարում համայնքային բյուջեի ծախսերի 21 %-ը կամ 86129.2 հազար դրամը ուղղվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը:

Ծախսերը ըստ գործառնական բնույթի ունեն հետևյալ տեսքը՝

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ

2020 թվականի ընթացքում համայնքային բյուջեում ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ խմբի ծախսերը կազմել են 69 937.8 հազար դրամ, որը կազմում է ամբողջ ծախսերի 19 %-ը, որի 55151.7 հազար դրամ կամ 78.8 %-ը ուղղվել է տեղական ինքնակառավարման մարմինների պահպանման ծախսերին, ընդհանուր բնույթի հանրային այլ ծառայությունների ձեռք բերմանը՝14786,0 հազար դրամ կամ 21,2 %-ը:

Տնտեսական հարաբերություններ

Հաշվետու տարում ընդհանուր ծախսերի 86129.2 հազար դրամ կամ 21 %-ը ուղղվել է համայնքում տնտեսական հարաբերությունների կարգավորմանը: Այս բնագավառում ներառված ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը, որը նախատեսված 60000,0 հազար դրամի դիմաց կատարվել է 25326.4 հազար դրամ՝ կատարվելով 42,2 %-ով: Ասֆալտապատման համար հատկացվել է նախատեսված գումարի 26258.0 հազար դրամ կամ նախատեսվածի 30.4 %-ը, փողոցների լուսավորության համար նախատեսված գումարի 27 %-ը կամ 23644.0 հազար դրամ, բնակարանային շինարարության համար նախատեսված գումարի 31210.2 հազար դրամը կամ 36 %-ը, նախատեսված գումարի 5.8 %-ը կամ 5017.0 հազար դրամը ուղղվել է տարբեր ծրագրերով գույքի, վարչական

սարքավորումների ձեռքբերմանը:

Շրջակա միջավայրի պաշտպանություն

2020 թվականին շրջակա միջավայրի պահպանության համար նախատեսված 20900.0 հազար դրամի դիմաց հատկացվել է 20340.2 հազար դրամ կամ ծախսվել է ամբողջ ծախսերի 6.1 %-ը:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությանը 2020 թվականին համայնքային բյուջեից հատկացվել է 55 514.2 հազար դրամ, կամ ամբողջ ծախսերի 16.8 %-ը:

Հանգիստ, մշակույթ և կրոն

2020 թվականին այս բնագավառին է հատկացվել 15776,2 հազար դրամ, որը տարեկան ծախսերի 4.7 %-ը: Նոր Հաճնի <<Մշակույթի տուն>> հիմնարկի պահպանմանը հատկացվել է 11550,0 հազար դրամ: Այդ բնագավառի համար հատկացված միջոցների 2129,0 հազար դրամը ուղղվել է քաղաքում սպորտային և մշակութային միջոցառումներ կազմակերպելու համար, 1157,0 հազար դրամ ուղղվել է Կիլիկիայի հայերի պատմության թանգարանի օդափոխության և արդիականացման աշխատանքների համար:

Կրթություն

2020 թվականին կրթության բնագավառին է տրամադրվել բյուջեի միջոցների 111050,2 հազար դրամ, որը տարեկան ծախսերի 33.6 %-ն է: Համայնքում գործող 1 նախադպրոցական հիմնարկի պահնպանմանը հատկացվել ոլորտի համար նախատեսված գումարի 41 %-ը, կամ 45633.5 հազար դրամ: Արտադպրոցական հիմնարկների պահպանմանն է հատկացվել այդ բնագավառի համար նախատեսված գումարի 59 %-ը կամ 65416.7 հազար դրամ:

Սոցիալական պաշտպանություն

2020 թվականին պահպանել է համայնքի կողմից որդեգրված սոցիալական քաղաքականության հիմնական ուղղությունը՝ նպաստներ և օգնություններ բնակչությանը, որը հաշվետու տարում կազմում է 12715.0 հազար դրամ կամ ամբողջ ծախսերի 3.8 %:

Կազմեց՝ Ս.Բաղալյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Նոր Հաճն համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. Պապյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Նոր Հաճն համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Նոր Հաճն համայնքի 2020 թվականի բյուջեում էական փոփոխություններ չեն նախատեսվում:

Ս. Բարսեղյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ